

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2018-2019 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

- | | | | |
|-----|--|---|--------|
| 1. | Ո՞վ է կառուցել Վաղարշապատ մայրաքաղաքը.
ա/ Վաղարշ Ա
գ/ Վաղարշ Գ | բ/ Վաղարշ Բ
դ/ Վաղարշակ | 0,5 մ. |
| 2. | Հռոմի դաշնակից ո՞ր երկիրն է գրավվել Արտաշես Բ-ի կողմից.
ա/ Վիրք
գ/ Ատրպատական | բ/ Կապադովկիա
դ/ Փոքր Հայք | 0,5 մ. |
| 3. | Ո՞վ է թագադրել Տրդատ Ա-ին.
ա/ Օգոստոս Օկտավիանոս
գ/ Կորբուլոն | բ/ Գնեսու Պոմպեոս
դ/ Ներոն | 0,5 մ. |
| 4. | Ո՞վ էր հայոց սպարապետը Ներսեհապատի ճակատամարտի ժամանակ.
ա/ Մուշեղ Մամիկոնյան
գ/ Վաչե Մամիկոնյան | բ/ Վարդան Մամիկոնյան
դ/ Վահան Մամիկոնյան | 0,5 մ. |
| 5. | Ե՞րբ է տեղի ունեցել հակաարաբական առաջին ապստամբությունը Հայաստանում.
ա/ 640 թ.
գ/ 703 թ. | բ/ 701 թ.
դ/ 705 թ. | 0,5 մ. |
| 6. | Ե՞րբ է Անին հռչակվել Հայաստանի մայրաքաղաք.
ա/ 948 թ.
գ/ 961 թ. | բ/ 963 թ.
դ/ 977 թ. | 0,5 մ. |
| 7. | Նշվածներից ո՞վ ՀՀ վարչապետ չի եղել.
ա/ Հ. Քաջազնունի
գ/ Ա. Վրացյան | բ/ Հ. Օհանջանյան
դ/ Ա. Ահարոնյան | 0,5 մ. |
| 8. | Ե՞րբ է գահին բազմել Հեթում Ա-ն.
ա/ 1198 թ.
գ/ 1222 թ. | բ/ 1219 թ.
դ/ 1226 թ. | 0,5 մ. |
| 9. | Ե՞րբ է տեղի ունեցել ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ (20-րդ) գումարման նստաշրջանը, որով որոշվեց դուրս բերել վարչամիավորը ԱդրԽՍՀ-ի կազմից և վերամիավորվել ՀԽՍՀ հետ.
ա/ 1988 թ. հունվարի 4
գ/ 1988 թ. փետրվարի 27-29 | բ/ 1988 թ. փետրվարի 20
դ/ 1988 թ. հունիսի 15 | 0,5 մ. |
| 10. | Ո՞ր տնտեսական քաղաքականությունն է իրագործվել Խորհրդային Հայաստանում ռազմական կոմունիզմից անմիջապես հետո.
ա/ նէպ
գ/ կոլեկտիվացում | բ/ նոր կուրս
դ/ ինդուստրացում | 0,5 մ. |
| 11. | Ընտրե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ տարբերակը.
ա/ Սևրի պայմանագիր, Երևանի համաձայնագիր, Սան Ռեմոյի խորհրդաժողով
բ/ Սևրի պայմանագիր, Սան Ռեմոյի խորհրդաժողով, Երևանի համաձայնագիր
գ/ Սան Ռեմոյի խորհրդաժողով, Սևրի պայմանագիր, Երևանի համաձայնագիր
դ/ Երևանի համաձայնագիր, Սևրի պայմանագիր, Սան Ռեմոյի խորհրդաժողով | | 0,5 մ. |
| 12. | Ինչպե՞ս էր կոչվում արքունի կալվածքները և գանձարանը հսկող պաշտոնյան Արշակունյաց Հայաստանում: | | 0,5 մ. |

13. Ո՞վ է հիմնադրել Մադրասի հայրենասիրական խմբակը:

0,5 մ.

14. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում 0 մ.)

- ա/ Երզնկայի զինադադարը
- բ/ Հայոց եկեղեցու գույքը բռնագրավելու մասին Նիկոլայ Բ-ի հրամանագիրը
- գ/ Արևմտահայերի առաջին համագումարը
- դ/ Բաշ-Ապարանի հերոսամարտը
- ե/ Բրեստ-Լիտովսկի հաշտությունը
- զ/ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ընդունումը

1	2	3	4	5	6

15. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1 մ. (5 X 0,2 մ.)

1. Լեռնահայաստանի (Սյունիքի) սպարապետ
2. ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար
3. ՀՍԽՀ արտգործո՞ղկոմ
4. ՀՍԽՀ ժողկոմխորհի (կառավարության) նախագահ
5. ՀՀ վարչապետ

ա. Գ. Հարությունյան բ. Ս. Տեր-Գաբրիելյան գ. Գ. Նժդեհ դ. Ա. Մռավյան ե. Ալ. Խատիսյան

1	2	3	4	5

16. Թվարկե՛ք Անիի Բագրատունիներին ենթակա 4 թագավորությունները: 1 մ. (4 X 0,25 մ.)

17. Ի՞նչ նշանակություն ուներ Արտաշես Ա-ի հողային բարեփոխումը Մեծ Հայքի թագավորության բանակի և պետական գանձարանի համար: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը:

1 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

18. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Հայաստանի առաջին հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն էր:
- բ/ Փետրվարյան ապստամբությունը մարել է, քանի որ Հ. Թումանյանին հաջողվել է հաշտեցնել ՀԿԿ-ին և ՀՅԴ-ին:
- գ/ «Պեպո»-ն հայկական առաջին հնչյունային կինոնկարն է:
- դ/ Փարիզի խաղաղության վեհաժողովում ՀՀ պատվիրակությունը ղեկավարում էր Պողոս Նուբարը:
- ե/ Երվանդ Քոչարը կերտել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի խմբաքանդակը:
- զ/ Հրայր Դժոխքը զոհվել է 1904 թ. Սասունի ապստամբության ժամանակ:
- է/ Անդրանիկը մասնակցել է 1915 թ. Վանի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

1	2	3

19. **Շարադրանք.** ներկայացրե՛ք հայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին. մասնակիցների թիվը, հայկական ազգային դիվիզիաները, ԽՍՀՄ հայ հերոսները և զորավարները: 3 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ր իշխանի օրոք է քրիստոնեությունը Հին Ռուսիայում ընդունվել պետական կրոն. 0,5 մ.
 ա/ Իվան Ահեղ բ/ Օլեգ
 գ/ Յարոսլավ դ/ Վլադիմիր
2. Ո՞վ է նշվածներից եղել Աթենքի տիրան. 0,5 մ.
 ա/ Կլիսթենես բ/ Պերիկլես
 գ/ Պիսիստրատ դ/ Լեոնիդաս
3. Ո՞վ է Սրբազան Հռոմեական կայսրության հիմնադիրը. 0,5 մ.
 ա/ Հուլիոս Կեսար բ/ Հենրիխ Ա
 գ/ Կարլոս Մեծ դ/ Օտտոն Ա
4. Ո՞ւմ օրոք է Հռոմը հասել իր ռազմական հզորության գագաթնակետին. 0,5 մ.
 ա/ Ներոն բ/ Մարկոս Տրայանոս
 գ/ Դիոկղետիանոս դ/ Մարկոս Ավրելիոս
5. Ինչպե՞ս էր կոչվում Հին Հռոմի հրապարակը. 0,5 մ.
 ա/ Ֆորում բ/ Կոլիզեում
 գ/ Պանթեոն դ/ Ագորա
6. Համապատասխանեցրե՛ք գիտնականներին և մշակույթի գործիչներին իրենց ոլորտների հետ. 1 մ. (4 X 0,25 մ.)
 1. Վ. Բրաուն
 2. Ս. Պրոկոֆև
 3. Ա. Մատիս
 4. Ն. Վավիլով

ա. գենետիկ բ. գեղանկարիչ գ. ճարտարագետ դ. երգահան

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
 ա/ 1920-ական թթ. սկզբին Չինաստանը պառակտված էր. հյուսիսում Պեկինի կառավարությունն էր, որը համագործակցում էր մեծ տերությունների հետ, իսկ հարավում իշխում էր սոցիալիստ Սուն Յաթսենի գլխավորած Չինաստանի ազգային կուսակցությունը (Գոմինդանը):
 բ/ Թուրքիան 1923 թ. հռչակվել է հանրապետություն:
 գ/ Մյունխենյան գործարքով Գերմանիան իրեն բռնակցել է Ավստրիան:
 դ/ Իտալիան Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին գրավել է Եթովպիան և Ալբանիան:
 ե/ Գերմանական բանակը գրավել է Փարիզը 1941 թ. հունիսի 22-ին:
 զ/ Ղրիմում դաշնակիցների զորքի ժամանմամբ 1944 թ. հունիսի 6-ին Գերմանիայի դեմ Եվրոպայում բացվել է երկրորդ ճակատը:

1	2	3

Առարկայական
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.04.2019 թ.